ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

07 նոյեմբերի 2011 թվականի թիվ 91 -Ա

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N 92-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐՈՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2011 թվականի փետրվարի 9-ի N 92-Ա որոշումը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 20.10.2011թ. N 034/5458-11 գրությունը՝ ՀՀ Տավուշի մարզպետարանում իրականացված ստուգմամբ արձանագրված փաստերի վերաբերյալ

կարգադրում եմ.

1. Ստուգման ակտով արձանագրված խախտումների, թերությունների և բացթողումների համար հայտարարել նկատողություն Իջևանի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրեն Լուսյա Խաչատրյանին, Իջևանի թիվ 3 հիմնական դպրոցի տնօրեն Վարսիկ Ստեփանյանին, Իջևանի թիվ 4 հիմնական դպրոցի տնօրեն Ռոզա Խառատյանին, Բերդի թիվ 3 հիմնական դպրոցի տնօրեն Արթուր Մելիքյանին, Դիլիջանի թիվ 6 հիմնական դպրոցի տնօրեն Սուսաննա Սարգսյանին:
2. Հանձնարարել վերոհիշյալ դպրոցների տնօրեններին՝ սահմանված ժամկետներում վերականգնել ստուգումների արդյունքում հայտնաբերված վերականգնման ենթական գումարները:
3. Կարգադրության կատարման ապահովումը հանձնարարել ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Փաշինյանին, աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ռ.Ներսեսյանին:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս.Դավթյանին:

Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

07 նոյեմբերի 2011թ.
ք.Իջևան